

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ ԵՒ ԹՐԲԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ

Posted on June 30, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



ՍԵՄ Բագուպեան, [Դիտակ](#) ամսագրի խմբագրապետ, Պեյրուզ, 30 Յունիս 2010

Արեւելքի քրիստոնեաները կը գաղթեն մեծ թիւերով, իսկ անդին Թուրքիա կը ներխուժէ արաբական աշխարհ այս անգամ խաղաղութեան զենքով գրաւելու արաբներու նախ սրտերը՝ ետքը տնտեսութիւնը: Թուրքիա կը շահագործէ պաղեստինեան հարցը եւ Իսրայելին կը հակադարձէ իր քրտական հարցին եւ հիւսիսային Քիւրտիստանի անկախութեան ծրագիրներուն նեցուկ կանգնելու համար: Եւ ինչպէս 100 տարի առաջ, երբ քրիստոնեայ ազգ մը բնաջնջուէր աշխարհի աչքերուն առջեւ եւ ոչ մէկ արեւմտեան երկիր կը փորձէր օգնել անոնց, այսօր ալ նոյնպէս, երբ անոնք կը գաղթեն իրենց դարաւոր ապրած հայրենական հողերէն, Արեւմուտքը սրտաբաց կ'ընդունի զանոնք Աւստրալիոյ, Շուէտի, Գերմանիոյ, Գանատայի եւ Միացեալ Նահանգներու մէջ:



ՍԵՄ Բագուպեան, [Դիտակ](#) ամսագրի խմբագրապետ, Պեյրուզ, 30 Յունիս 2010

Արեւելքի քրիստոնեաները կը գաղթեն մեծ թիւերով, իսկ անդին Թուրքիա կը ներխուժէ արաբական աշխարհ այս անգամ խաղաղութեան զենքով գրաւելու արաբներու նախ սրտերը՝ ետքը տնտեսութիւնը: Թուրքիա կը շահագործէ պաղեստինեան հարցը եւ Իսրայելին կը հակադարձէ իր քրտական հարցին եւ հիւսիսային Քիւրտիստանի անկախութեան ծրագիրներուն նեցուկ կանգնելու համար: Եւ ինչպէս 100 տարի առաջ, երբ քրիստոնեայ ազգ մը բնաջնջուէր աշխարհի աչքերուն առջեւ եւ ոչ մէկ արեւմտեան երկիր կը փորձէր օգնել անոնց, այսօր ալ նոյնպէս, երբ անոնք կը գաղթեն իրենց դարաւոր ապրած հայրենական հողերէն, Արեւմուտքը սրտաբաց կ'ընդունի զանոնք Աւստրալիոյ, Շուէտի, Գերմանիոյ, Գանատայի եւ Միացեալ Նահանգներու մէջ:



Պաղեստինեան հարցով, արաբները յուսահատ Արեւմուտքէն՝ գրկաբաց կ'ընդունին թուրքերը, իրենց առեւտուրով, մշակոյթով եւ միջնորդութեամբ: Մի քանի տարի առաջ Սուլթան Համիտի յուշարձանը տնկուեցաւ Լիբանանի Թրիփոլի քաղաքին մէջ: Հեռու չէ որ ուրիշ գիւղի կամ քաղաքի մը մէջ ալ «խաղաղութեան նաւատորմ»ի թատերգութեան նման դէպքէ մը ետք Քեմալ Աթաթիւրքի արձանը տնկուի իբրեւ խաղաղութեան եւ արդարութեան հոմանիշ: Իսկ Պաղտատի, Մուսուլի եւ Քերքուքի մէջ քրիստոնեայ համայնքը այլեւս կարծես անելորդ կամ նոյնիսկ անբաղձալի տարր դարձաւ: Պաղեստինի քրիստոնեայ համայնքն ալ գոյութեան պայքար կ'ապրի: Իսկ Պարսկաստանի քրիստոնեայ համայնքը իսլամական յեղափոխութենէն ի վեր, թէեւ ոչ մէկ հալածանքի ենթարկուեցաւ՝ սակայն խանգարուած ներքին խաղաղութիւնը եւ արտաքին աշխարհի հետ տեղի ունեցած անկայուն վիճակը՝ դիւրացուց անոնց գաղթը: Այս երկիրներուն մէջ հայերը միշտ կարեւոր թիւ կը կազմեն: Թրքական խաղաղութեան նաւատորմը կը ներխուժէ արաբական աշխարհ ուր երկար տարիներէ ի վեր տեղացի հայեր կ'ապրին արաբներու հետ խաղաղութեան մէջ,

